Մեծամոր համայնքի սոցիալական ոլորտի ծրագրերը

1. Մեծամոր համայնքի սոցիալական կարիքների գնահատում

ՄԵԾԱՄՈՐ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

Բնակչության թիվ	12,165
Տնային տնտեսությունների թիվ	3,014
Երեխաների թիվ	4,120
Գործազուրկներ	N/A
«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ	109
Համայնքային սոցիալական աշխատող	Այո
ՀԿ-ների թիվը	2
Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ	37 (տարիք 18-65՝ 29 , 65+ ՝ 8 մասնակից)

Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

Համայնքի առաջնային կարիքներից մասնակիցներն առանձնացրեցին հետևյալ կարիքները

- Երեխաների համար ժամանցի վայրերի՝ մանկական սրճարանի, խաղահրապարակների բացակայությունը – բնակիչների խոսքով, ամբողջ քաղաքում կա՛մ մեքենաներ են, կա՛մ ավտոտնակներ, և երեխաները խաղալու, ժամանցի որևէ հնարավորություն չունեն: Երեխաներն էլ ստիպված խաղում են ճանապարհներին, կամ էլ հավաքվում են զրուցարաններում, որտեղ տարեցները զբաղված են թղթախաղով կամ նարդի խաղալով
- Շենքերի նկուղների անմխիթար վիճակը – այս խնդրի առկայությունը հատկապես ակնհայտ զգացել են 44-օրյա պատերազմի օրերին, երբ ցուցանակներով մարդկանց հայտնում էին, որ վտանգի դեպքում անհրաժեշտ է պատսպարվել նկուղներում: Այնինչ շենքերի նկուղները անմխիթար վիճակում են, և հատկապես պատերազմական վիճակում նկուղում պատսպարվելը մեծ հարցականի տակ է մնում: Առաջարկվում էր նկուղները մարդկանց անձնական օգտագործման նպատակով բաժանելու փոխարեն նախապատրաստել որպես ապաստարան արտակարգ իրավիճակների համար
- Մանկապարտեզների անմխիթար վիճակը մանկապարտեզները չեն գործում ձմռան ամիսներին
- 13+ տարիքի երեխաները ներգրավված են գյուղատնտեսական աշխատանքներում:
- Միայնակ, ինքնախնամք իրականացնել չկարողացող,դժվարությամբ տեղաշարժվող տարեցների կենցաղային սպասարկման, բժշկական օգնության խնդիրը: Ցանկալի կլիներ նրանց կցվեր մեկը նման ծառայություններ մատուցելու համար:

- *Տարեցների զբաղմունքի, ժամանցի, խնամքի վայրի բացակայությունը* Տարեցները ցանկություն ունեն աշխատելու, եկամուտ ստեղծելու, հասարակության լիարժեք անդամ զգալու և ինքնադրսևորվելու:
- *Հաշմանդամ երեխաների ծնողներ*ին աշխատանքով ապահովելու խնդիրը

- *Տնային պայմաններում հաշմանդամներին, անկողնային հիվանդներին խնամքի սպասարկում*
- *Ցերեկային խնամքի տրամադրում հաշմանդամ երեխաներին*: Համայնքում գործում է հաշմանդամ երեխաների խնդիրներով զբաղվող միակ ՀԿ-ն՝ «Հույսի Մեծամոր»-ը, որը ամենօրյա խնամքի ծառայություն չի տրամադրում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

- Մասնագիտական ուսուցման ծրագրերի բացակայություն հաշմանդամների համար:

Առաջարկներ

- Հարցվողները կարևորում են համայնքում ակտիվ մարդկանցից կազմված խմբի ձևավորումը: Խմբի հիմնական նպատակը պետք է լինի համայնքի զարգացմանն ուղղված տարբեր միջոցառումների կազմակերպումը և ներդրումների ներգրավումը:
- Հաշմանդամների և՛ մեծերի, և՛ երեխաների ցերեկային կենտրոնի ստեղծում, որը կապահովի հաշմանդամի զբաղվածությունը, հնարավորություն կտա խնամողին աշխատելու: Այս դեպքում խնամողը ոչ մեկից գումար չի պահանջի:
- Տարեցների համար ժամանցի ու զբաղվածություն ցերեկային կենտրոնի ստեղծում՝ «Ծերապարտեզ»:
- Միայնակ ծերերի համար տնային խնամքի ծառայության ստեղծում:
- Սպորտային համալիրի վերանորոգումն ու շահագործում:
- Երիտասարդների համար արհեստների ուսուցման ծառայության ստեղծում:
- Մանկական ժամանցի և զարգացման կենտրոնների ստեղծում:
- Երեխաների համար խաղահրապարակի կառուցում:
- Կանանց ձեռքի աշխատանքների կենտրոնի հիմնադրում, որտեղ հնարավոր կլինի սովորել, ստեղծագործել և հնարավորության դեպքում վաճառել աշխատանքները:

<u>ՄՐԳԱՇԱՏ</u>

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

Բնակչության թիվ	5,500
Տնային տնտեսությունների թիվ	1,404
Երեխաների թիվ	1,060
Գործազուրկներ	N/A
«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ	80
Համայնքային սոցիալական աշխատող	Այո
ՀԿ-ների թիվը	0
Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ	38 (Տարիք 18-65՝ 32, 65+ ՝ 6 մասնակից)

Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

- Համայնքի առաջնային կարիքների շարքում է զբաղվածությունը, հատկապես երիտասարդների զբաղվածությունը, քանի որ համայնքում գյուղատնտեսությունը դարձել է անարդյունավետ:
- Առաջնային են համարում երեխաների զբաղվածության և ժամանցի խնդիրը, երեխաների համար չկա որևէ վայր, որտեղ կարող է անցկացնել ազատ ժամանակը, դպրոցական առարկաներից զատ ստանալ այլ գիտելիքներ, զարգանալ:
- Խնդիրներ կան հատկապես հաշմադամություն ունեցող երեխաների հետ. նրանց համար որևէ ծառայություն չկա համայնքում՝ ոչ զարգացնող, ոչ խնամքի: Խնդրահարույց է նաև այդ երեխաների համար օգնող պարագաների՝ քայլակ և այլն ձեռք բերումը. գործընթացը խիստ բյուրոկրատական է և շատ ժամանակատար:
- համայնքի համար դժվար լուծելի խնդիների շարքում հիմնականում նշում են ոռոգման ջրի, լուսավորության խնդիրները:
- Բնակչության սոցիալական վիճակով պայմանավորված՝ ավելանում են նաև հիմնախնդիրները, որտեղ առաջնային են համարվում առողջապահական խնդիրները, քանի որ ցածր եկամուտների պատճառով շատերը դժվարանում են օգտվել առողջապահական ոլորտի ծառայություններից, որից առավելապես տուժում են երեխաներն ու տարեցները: Մի կողմից ոչ բոլոր մասնագետներն են տեղում առկա, մյուս կողմից, եթե ծառայությունները Արմավիրում կամ Երևանում կարող են գտնել, ապա վճարունակ չեն դրանց ստանալու համար:
- Համայնքի առաջնային խնդիրներից են նաև երեխաների և երիտասարդների համար ժամանցի վայրերի բացակայությունը՝ սրճարան, խաղահրապարակ, տարեցների խնամքի կենտրոնների բացակայությունը, հաշմանդամություն ունեցող երեխաների համար ցերեկային կենտրոնի բացակայությունը:

Առաջարկներ

- Հիմնել հաշմանդամություն ունեցող երեխաների և չափահաս անձանց ցերեկային ծառայություն:
- Համայնքում բացել տարեցների ժամանցի կենտրոն:
- Հիմնել մանկական ժամանցի, զարգացման կենտրոններ:
- Ստեղծել կանանց, ինչու չէ նաև տարեցների ձեռքի աշխատանքների կենտրոն, որտեղ հնարավոր կլինի սովորել, ստեղծագործել և հնարավորության դեպքում վաճառել աշխատանքները:

2. *Մեծամոր համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը և նպատակները*

Մեծամոր համայնքի սոցիալական ոլորտի տեսլական է՝ ***հավասար հնարավորություններ, լիարժեք և բարեկեցիկ կյանք բոլորի համար, համայնքի անդամների ակտիվ, եռանդուն ներգրավվածություն ու ներառվածություն համայնքային կյանքին:***

Նշված տեսալականին հասնելու համար սահմանվել են հետևյալ ***նպատակները***

- Մեծամոր խոշորացված համայնքում հիմնել տարեցների խնամքի բազմաֆունկցիոնալ կենտրոն, որտեղ տարեցները կստանան սոցիալական, հոգեբանական, առողջապահական ծառայություններ և կունենան սոցիալական շփումների, ազատ ժամանցի և մշակութայինն միջոցառումների մասնակցության հնարավորություն:
- Բարելավել 18 տարեկանից բարձր ՀՈՒԱ կյանքի որակը և ապահովել նրանց ներառումը հասարակության մեջ բազմաբնույթ ծառայություններ մատուցելու միջոցով (սոցիալական, հոգեբանական, վերականգնողական, կրթական, մշակութային և այլն):
- Ապահովել հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանիքում և համայնքում ապրելու և արարելու իրավունքը, նպաստել նրանց սոցիալական ներառմանը՝ Մեծամորի ցերեկային կենտրոնում նրանց սոցիալական կարիքներին համապատասխան ծառայությունների մատուցման միջոցով
- Հիմնել ընտանիքների աջակցության բազմաֆունկցիոնալ կենտրոն, որը բազմաբնույթ ծառայությունների միջոցով կնպաստի ընտանինքերի հզորացմանը, որպեսզի նրանք կարողանան բացահայտել և զարգացնել իրենց հմտություններն ու ռեսուրսները, ազդեցություն ունենալ սեփական կյանքի վրա՝ բարելավելով կյանքի պայմանները եւ հաղթահարելով ծառացած հիմնախնդիրները

Հիմք ընդունելով համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը և նպատակները՝ արդյունքները և անհրաժեշտ գործողությունները սահմանվել են տրամաբանական հենքի մեթոդաբանությամբ, որոնք ներկայացված են Աղյուսակ 1.-ում:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման հասնելու խնդիրները, արդյունքները և գործողությունները (սոցիալական ոլորտ)

հ/հ	*Խնդիրները*	*Միջանկյալ արդյունքները*	*Անհրաժեշտ գործողությունները*	*Պահանջվող ռեսուրսները*

4	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության	1. ***Մեծամոր խոշորացված համայնքի Մրգաշատ գյուղում ներդրված է տարեցների խնամքի ծառայություն***, որը տարեկան սպասարկում է առնվազն 100-120 տարեցի Մեծամոր, Մրգաշատ, Արևիկ և Ալաշկերտ համայնքներից 2. Բազմամասնագիտական բարձր որոկավորում ունեցող թիմ՝ Վարչական աշխատողներ (տնօրեն, հաշվապահ, հավաքարար, Խոհարար, վարորդ) 2 սոցիալական աշխատող, 1 հոգեբան, ուսուցանողներ՝ հմտություններ և մշակութային խմբակներ- 3 /կամավորական հիմունքներով/ 3. Շահառուների առնվազն 95%-ը բավարարված է տրամադրվող ծառայությունների որակից 4. Համայնքային առնվազն 5 կառույցների (դպրոց, մշակույթի տուն, առողջապահություն, ԽՀՀ, ՄՍԾ) ներկայացուցիչ ակտիվ ներգրավված է համայնքի տարեցների հիմնախնդիրների լուծման գործընթացում, տարեկան կազմակերպվել են առնվազն 10 Կլոր-սեղան քննարկումներ	✓ Մրգաշատ գյուղում առկա տարածքը վերանորոգել, հարմարեցնել և կահավորել համապատասխան տեխնիկակն միջոցներով և գույքով, որպես տարեցների խնամքի կենտրոն, ✓ Կազմել տարեցներին անհրաժեշտ ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը, տեխնիկական առաջադրանքները, սահմանել ներքին աշխատանքային կանոնակարգեր և աշխատանքի էթիկական նորմեր ✓ Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչները, ստեղծել մասնագետների և կամավորների բազա, հավաքագրել որակյալ մասնագետներ ✓ Սահամանել անհրաժեշտ ծառայությունների ցանկը, ստանդարտները և չափորոշիչները ✓ Կազմել ծառայությունների մատուցման ժամանկացույցը ✓ Ներգրավել շահառուներին ըստ սահմանված չափորոշիչների և ըստ գնահատված կարիքների ներառել ծառայությունների ծրագրերում ✓ Քարտեզագրել շահագրգիռ կառույցները ✓ Համագործակցել շահագրգիռ կառույցների հետ կազմակերպելով կլոր սեղան քննարկումներ, մշակել շահառուների աջակցության համատեղ գործողությունների ծրագրեր և ապահովել ծրագրերի իրականացումը	Համայնքի մարդկային և մասնագիտական ռեսուրս, բարեգործական կազմակերպություններ, Կամավորներ, միջազգային դոնորներ, տեղեկատվական նյութեր, գույք

		1. Մեծամոր խոշորացված համայնքում ներդրվել է հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություն, որը տարեկան սպասարկում է առնվազն 60-80 շահառու 2. Ձևավորված է բազմամասնագիտական բարձր որոկավորում ունեցող թիմի առկայություն 3. Տարեկան առնվազն ՀՈՒԱ 60-80 շահառու ստանում է որակյալ ծառայություն, շահառուների 70%-ը ակտիվ ներառված է համայնքային կյանքում 4. Շահառուների հիմնախնդիրների համապարփակ լուծման նպատակով ձևավորվել է համագործակցային ցանց, որում ներգրավված են առնվազն 5 կառույցների ներկայացուցիչներ	✓ Ստեղծել պայմաններ ծառայություններ մատուցելու համար ✓ (ձեռք բերել համապատասխան տարածք, գույք, կենցաղային պարագաներ, անհրաժեշտ նյութեր) ✓ Ձեռք բերել տեխնիկական միջոցներ ✓ (բազմաֆունկցիոնալ տպիչ սարք, հեռախոս, նոթբուք, սառնարան, էլեկտրական վառարան) ✓ Մոբիլ ծառայության համար ձեռք բերել կամ վարձակալել մեքենա և հարմարեցնել ըստ կարիքի ✓ Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչներ, ✓ Հավաքագրել որակյալ մասնագետներ ✓ Սահմանել ներքին աշխատանքային կանոնակարգեր և աշխատանքի էթիկական նորմեր ✓ Կազմել ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը, ✓ Ստեղծել մասնագետների և կամավորների բազա ✓ Կազմել մատուցվող ծառայությունների ցանկը, ստանդարտները և չափորոշիչները ✓ Կազմել ծառայությունների մատուցման ժամանկացույցը) ✓ իրականացնել շահառուների կարիքի գնահատում և ներառում համապատասխան ծառայությունների ծրագրերում (ցերեկային խնամք, հմտությունների ուսուցում, սոցիալական և հոգեբանական աջակցություն, ֆիզիոթերապիա, տնային սպասարկման ծառայություն,) ✓ Համագործակցել Արմավիրի մարզպետարանի համապատասխան վարչությունների, ՄՍԾ, ՏԻՄ սոցիալական բաժնի և այլ շահագրգիռ կառույցների հետ և ստեղծել համագրոծակցային ցանց, ապահովելով ՀՈՒԱ հիմնախնդիրների մասնակցային լուծումը ✓ Կազմակերպել համագործակցային ցանցի կառույցների ներկայացուցիչների հետ ՀՈՒԱ խնդիրների շուրջ տարեկան առնվազն 4 կլոր-սեղան քննարկումներ ծրագրի հաջող իրականացումը և շարունակականությունը ապահովելու համար	

		1. ***Մեծամոր համայնքում կգործի բարեկարգված ցերեկային կենտրոն հաշմանդամություն ունեցող երեխաների համար***, որը սոցիալական ծառայություններ կմատուցի ամսեկան 50 երեխայի 2. Մեծամոր խոշորացված համայնքի առնվազն 50 հաշմանդամություն ունեցող երեխա ստանում է որակյալ սոցիալ-վերականգնողական և հոգեբանական ծառայություններ	✓ Կենտրոնում իրականացնել մասնակի վերանորոգման աշխատանքներ ✓ Համալրել կենտրոնը գույքով և պարագաներով ✓ Ձևավորել մասագիտական աշխատակազմ ծառայությունների մատուցման համար ✓ Մասնագետների կողմից մատուցել ամենօրյա ծառայություններ կենտրոնի շահառուներին ✓ Ապահովել ցերեկային կենտրոնում հաշմանդամություն ունեցող երեխաների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում	
		Մեծամոր խոշորացված համայնքում ներդրված է ընտանիքների աջակցության ծառայություն, որը տարեկան սպասարկում է առնվազն 120 ընտանիք 1. Ձևավորված է բազմամասնագիտական բարձր որոկավորում ունեցող թիմ	✓ Ձեռք բերել համապատասխան տարածք, գույք, տեխնիկական միջոցներ ✓ Կազմել ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը, տեխնիկական առաջադրանքները, սահմանել ներքին աշխատանքային կանոնակարգեր և աշխատանքի էթիկական նորմեր ✓ Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչները, հավաքագրել որակյալ մասնագետներ ✓ Ստեղծել մասնագետների և կամավորների բազա	

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N1.

« Տարեցների խնամքի կենտրոն Մեծամոր բազմաբնակավայր համայնքում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Ծրագրի անմիջական նպատակ	Մեծամոր խոշորացված համայնքում հիմնել տարեցների խնամքի բազմաֆունկցիոնալ կենտրոն, որտեղ տարեցները կստանան սոցիալական, հոգեբանական, առողջապահական ծառայություններ և կունենան սոցիալական շփումների, ազատ ժամանցի և մշակութային միջոցառումների մասնակցության հնարավորություն:						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	100	100	120	120	130
	1. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ						
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	5	7	7	10	10
	2. Համայնքի բնակիչները բավարված են կետրոնում մատուցվող ծառայություններից						
	Շահառուների՝ ծառայություններից բավարարվածության մակարդակ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	90%	90%	95%	95%	95%
	3. Համայնքում գործում է համագործակցության ցանց						
	Համագործակցության ցանցում ընդգրկված կազմակերպություններ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	5	5	7	7	7
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Մրգաշատ գյուղում առկա տարածքը վերանորոգել, հարմարեցնել և կահավորել համապատասխան տեխնիկակն միջոցներով և գույքով, որպես տարեցների խնամքի կենտրոն 1.2 Կազմել տարեցներին անհրաժեշտ ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը, տեխնիկական առաջադրանքները, սահմանել ներքին աշխատանքային կանոնակարգեր և աշխատանքի էթիկական նորմեր2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						

	2.1 Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչները, ստեղծել մասնագետների և կամավորների բազա, հավաքագրել որակյալ մասնագետներ *3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ* *3.1 Սահամանել անհրաժեշտ ծառայությունների ցանկը, ստանդարտները և չափորոշիչները* *3.2 Կազմել ծառայությունների մատուցման ժամանկացույցը* *3.3 Ներգրավել շահառուներին ըստ սահմանված չափորոշիչների և ըստ գնահատված կարիքների ներառել ծառայությունների ծրագրերում* *4-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ* *4.1 Քարտեզագրել շահագրգիռ կառույցները* *4.2 Համագործակցել շահագրգիռ կառույցների հետ կազմակերպելով կլոր սեղան քննարկումներ, մշակել շահառուների աջակցության համատեղ գործողությունների ծրագրեր և ապահովել ծրագրերի իրականացումը*
Ծրագրի բյուջեն	*19 մլն դրամ*
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	*Ծառայության կազմակերպման համար տարածք, ծրագրով նախատեսված սոցիալական ծառայությունների մասնագետներ*
Ծրագրի հիմնական ռիսկերը	*Բնակչության շրջանում առկա կարծրատիպերը*
Ծրագրի հիմնական շահառուները	*Միայնակ տարեցներ*
Ծրագրի սկիզբ և ավարտ	*2022-2026*
Ծրագրի համառոտ նկարագրություն	*Ելնելով երկրի ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակից երիտասարդների մեծ մասը աշխատանք գտնելու նպատակով լքում է երկիրը, իսկ տարեցները մնում են միայնակ, լքված և անօգնական:* *Նրանք ունեն սոցիալական, հոգեբանական, ժամանցի, շփման և այլ կարիքներ: Բացի միայնակ տարեցներից շփման և ժամանցի կարիք ունեն նաև ընտանիքներում ապրող տարեցները, որոնք կարող են մասնակցել կենտրոնում գործող խմբակներին և մշակութային միջոցառումներին:* *Ուստի շատ կարևոր է ունենալ մի վայր, որտեղ նրանք կստանան խնամք և բազմաբնույթ ծառայություններ (առողջապահական , հոգեբանական, մշակութային և այլ):* *Պետք է նկատի ունենալ, որ կան տարեցներ, որոնք չեն կարողանա այցելել կենտրոն, ուստի կարիք կլինի ունենալ նաև մոբիլ ծառայություն, որի մեջ կներառվի կենցաղային սպասարկում, հիգիենա, բժշկական ծառայություն:* *Ըստ համայնքներից ստացված վիճակագրական տվյալների Մրգաշատ, Մեծամոր և հարակից երկու, երեք համայնքներում կան առնվազն 120 և ավել միայնակ տարեցներ, որոնցից առնվազն 15-20 ունեն մոբիլ ծառայության կարիք:* *Միայնակ տարեցների թիվը շարունակաբար միտում ունի աճելու, քանի որ աճում է նաև միգրացիան:* *Ծրագիրը ունի նաև մեկ այլ նպատակ՝ հաղթահարել կարծրատիպը և արմատավորել այն գաղափարը, որ տարեցները կարող են խնամք ստանալ նաև ընտանիքից դուրս: Պետք է նկատի ունենալ նաև մի կարևոր հանգամանք, որ Մեծամոր համայնքում չկա տարեցների խնդրով զբաղվող որևէ ծառայություն:*

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 2.

«18 և բարձր տարիքի հաշմանդմություն ունեցող անձանց (ՀՈՒԱ) աջակցության ծառայություն»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Ծրագրի անմիջական նպատակ	Բարելավել 18 տարեկանից բարձր ՀՈՒԱ կյանքի որակը և ապահովել նրանց ներառումը հասարակության մեջ բազմաբնույթ ծառայություններ մատուցելու միջոցով (սոցիալական, հոգեբանական, թերապևտիկ, կրթական, մշակութային և այլն):						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	60	70	70	80	80
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ						
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	5	7	7	10	10
	2. Կենտրոնի կողմից մատուցվում եմ որոկյալ ծառայություններ						
	Մատուցվող ծառայությունների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	5	5	7	7	7
	3. Համայնքում գործում է համագործակցության ցանց						
	Համագործակցող կազմակերպությունների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2022	2023	2024	2025	2026
		-	5	5	7	7	7
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Ստեղծել պայմաններ ծառայություններ մատուցելու համար (ձեռք բերել համապատասխան տարածք, գույք, կենցաղային պարագաներ, անհրաժեշտ նյութեր) 1.2 Ձեռք բերել տեխնիկական միջոցներ (բազմաֆունկցիոնալ տպիչ սարք, հեռախոս, նոթբուք, սառնարան, էլեկտրական վառարան) 1.3 Մոբիլ ծառայության համար ձեռք բերել կամ վարձակալել մեքենա և հարմարեցնել ըստ կարիքի 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						

	1.1 Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչներ, *1.2 Հավաքագրել որակյալ մասնագետներ* *1.3 Սահմանել ներքին աշխատանքային կանոնակարգեր և աշխատանքի էթիկական նորմեր* *1.4 Կազմել ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը,* *1.5 Ստեղծել մասնագետների և կամավորների բազա* *3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ* *3.1 Կազմել մատուցվող ծառայությունների ցանկը, ստանդարտները և շափորոշիչները* *3.2 Կազմել ծառայությունների մատուցման ժամանկացույցը)* *3.3 իրականացնել շահառուների կարիքի գնահատում և ներառում համապատասխան ծառայությունների ծրագրերում (ցերեկային խնամք, հմտությունների ուսուցում, սոցիալական և հոգեբանական աջակցություն, ֆիզիոթերապիա, տնային սպասարկման ծառայություն,)* *4-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ* *4.1 Համագործակցել Արմավիրի մարզպետարանի համապատասխան վարչությունների, ՄՍԾ, ՏԻՄ սոցիալական բաժնի և այլ շահագրգիռ կառույցների հետ և ստեղծել համագործակցային ցանց, ապահովելով ՀՈՒԱ հիմնախնդիրների մասնակցային լուծումը* *4.2 Կազմակերպել համագործակցային ցանցի կառույցների ներկայացուցիչների հետ ՀՈՒԱ խնդիրների շուրջ տարեկան առնվազն 4 կլոր-սեղան քննարկումներ ծրագրի հաջող իրականացումը և շարունակականությունը ապահովելու համար*
Ծրագրի բյուջեն	***22 մլն դրամ***
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	*Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ*
Ծրագրի հիմնական ռիսկերը	*Համայնքում բնակավայրերի քանակը, տարածությունը, տրանսպորտային հասանելությունը*
Ծրագրի հիմնական շահառուները	*18 տարեկանից բարձր ՀՈՒԱ*
Ծրագրի սկիզբ և ավարտ	*2022-2026*
Ծրագրի համառոտ նկարագրություն	*Որքան էլ փորձում ենք ապահովել հաշմանդմություն ունեցող անձանց (այսուհետ ՀՈՒԱ) ներառվածությունը հասարակության մեջ, այդուհանդերձ մարդկանց խտրական և ոչ միանշանակ վերաբերմունքը, գոյություն ունեցող կամ ձևավորված կարծրատիպերը ուղղակիորեն ազդում են ՀՈՒԱ ոչ լիարժեք ներառմանը հասարակության մեջ՝ օտարելով, հեռացնելով, հաճախ նաև մեկուսացնելով նրանց:* *Մեծամոր խոշորացված համայնքում ՀՈՒԱ լայն իմաստով կարիքների բավարարման խնդիրը բաց է, սպասարկման հնարավորությունները՝ խիստ սահմանափակ կամ ոչ լիարժեք:* *Համայնքում ՀՈՒԱ խնդիրներով զբաղվող մասնագետների պակասը, համապատասխան ենթակառուցվածքների, հարմարությունների բացակայությունը կամ անբավարարությունը, Երևանում և այլ շրջաններում գոյություն ունեցողների անմատչելիությունն ու անհասանելիությունը լուրջ խոչընդոտներ և խնդիրներ են ստեղծում ՀՈՒԱ համար՝ կրկին հեռացնելով ու օտարելով հասարակությունից:*

	Համայնքում ՀՈՒԱ հնարավորություն չունեն իրացնելու իրենց հանգստի և ժամանցի իրավունքը, անմասն են համայնքի մշակութային կյանքին, իրենց գիտելիքների, հմտությունների, կարողությունների դրսևորման սահմանափակ հնարարվորությունները կամ դրանց բացակայությունը խոչընդոտում են նրանց հետագա զարգացմանը, լրացուցիչ կրթություն ստանալուն (ԲՈՒՀ, ՄՄՈՒ, արհեստագործական և այլ հաստատություններ), համապատասխան աշխատանք և զբաղվածություն ունենալուն: *Խնամքի և հոգեբանական աջակցության բացակայությունը բացասաբար են անդրադառնում ոչ միայն ՀՈՒԱ, այլև նրանց խնամող անձանց ֆիզիկական և հոգեկան առողջության վրա՝ խոչընդոտելով նաև նրանց զբաղվածությանը:* *Համայնքում 18տ. և բարձր ՀՈՒԱ իրական թիվը արտացոլված չէ որևէ կառույցի համապատասխան ծառայության պաշտոնական տեղեկատվական հարթակում:* *Շատ դեպքերում նաև հաշմանդամության կարգի որոշումը իրավացիորեն չի արտահայտում առկա իրավիճակը, իսկ վերջին իրադարձությունների (պատերազմի) հետ կապված վստահաբար կարող ենք ասել, որ 18տ. և բարձր ՀՈՒԱ թիվը աճել է:* *Ուստի, կարևորելով առկա խնդիրը, 18տ. և բարձր ՀՈՒԱ ստեղծումը առաջնահերթություն է:* *Հնարավորություն տանք ՀՈՒԱ՝ իրենց զգալու հանրության, համայնքի, պետության անքակտելի և կարևոր մասնիկը՝ օգտագործելով նրանց ներուժը ի բարօրություն իրենց կյանքի, համայնքի և պետության:*

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 3.

« Ցերեկային խնամքի կենտրոն հաշմանդամություն ունեցող երեխաների համար»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	*Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը*						
Ծրագրի անմիջական նպատակ	*Ապահովել հաշմանդամություն ունեցող երեխաների՝ համայնքում և ընտանիքում ապրելու և արարելու իրավունքը, նպաստել նրանց սոցիալական ներառմանը՝ Մեծամորի ցերեկային կենտրոնում նրանց սոցիալական կարիքներին համապատասխան ծառայությունների մատուցման միջոցով*						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	*Ելակետային արժեք*	*Թիրախային արժեքներ*				
		2021	*2022*	*2023*	*2024*	*2025*	*2026*
		-	*40*	*40*	*45*	*45*	*50*
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	*1. Ծառայության մատուցման համար հարմարեցված սենյակներ*						
	Սենյակների թիվ	*Ելակետային արժեք*	*Թիրախային արժեքներ*				
		2021	*2022*	*2023*	*2024*	*2025*	*2026*
		-	*2*	*2*	*3*	*3*	*3*
	2. Կենտրոնի կողմցի մատուցվում են որակյալ ծառայություններ						
	Մասնագետների թիվը	*Ելակետային արժեք*	*Թիրախային արժեքներ*				
		2021	*2022*	*2023*	*2024*	*2025*	*2026*
		-	*5*	*5*	*7*	*7*	*10*
Ծրագրի հիմնական գործողությունները	*1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ* *1.1 Իրականացնել մասնակի վերանորոգման աշխատանքներ կենտրոնում: Այստեղ նախատեսվում է ծրագրի առաջին 2 ամիսների ընթացքում իրականացնել մասնակի վերանորոգման և հարմարեցման աշխատանքներ կենտրոնի տարածքում: Կենտրոնը մոտ*						

	160քմ տարածքով առանձին մուտքով կառույց է թիվ 2 մանկապարտեզի շենքում, ունի մի քանի սենյակներ: Կիրականացվեն վերանորոգման, գունավոր և գրավիչ տեսք հաղորդող հարդարման աշխատանքներ՝ աշխատանքներն արդյունավետ և լիարժեք դարձնելու համար: *1.2 Համալրել կենտրոնը գույքով և պարագաներով: Նախատեսվում է վերանորոգումից հետո ձեռք բերել և կենտրոնը համալրել նոր գույքով, որոշ պարագաներով, խաղերով ու խաղալիքներով: Դրանք կնպաստեն մատուցվող ծառայությունների բարձր որակն ու արդյունավետությունը:* *2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ* *2.1 Ձևավորել մասագիտական աշխատակազմ ծառայությունների մատուցման համար: Հաշվի առնելով նախկին փորձը նախատեվսում է կենտրոնի գործարկման համար կազմել աշխատակազմ հետևյալ մասնագետներով՝ սոցիալական աշխաատող, հոգեբան, արտ թերապևտ, լոգոպեդ, հատուկ մանկավարժ:* *2.2 Մասնագետների կողմից մատուցել ամենօրյա ծառայություններ կենտրոնի շահառուներին:* *գործողություններ. նախ մասնագետները կհավաքագրեն շահառուներին՝ հաշվի առնելով նաև նախկին ցուցակներն ու նոր բացահայտված երեխաներին: Նրանց համար կիրականացվի կարիքների և կարողությունների գնահատում մասնագետների կողմից: Այն կիրականացվի համապատասխան մեթոդաբանությամբ, այն է՝ ԱՀԿ ՖՄԴ գործիքակազմով: Գնահատված կարիքների հիմնա վրա յուրաքանչյուր երեխայի համար կմշակվի անհատական զարգացման պլան, որից հետո կմշակվի աշխատանքային ժամանակացույց: Յուրաքանչյուր երեխա կստանա իր կարիքներին համապատասխան սոցիալ-վերականգնողական և հոգեբանական ծառայություններ կենտրոնում:* *2.3 Ապահովել ցերեկային կենտրոնում հաշմանդամություն ունեցող երեխաների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում: Կձևավորվեն շահառուների կարիքներին ու կարողություններին համապատասխան կավագործության և արտ թերապիայի/դիզայնի խմբակներ: Նախկին փորձը ցույց է տալիս, որ այս խմբակներն ամենից արդյունավետն են, որոնք աջակցում են նաև շահառուների հետագա զբաղվածության ապահովմանը:*
Ծրագրի բյուջեն	*10 մլն դրամ*
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	*Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ*
Ծրագրի հիմնական ռիսկերը	*Համայնքի բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ*
Ծրագրի հիմնական շահառուները	*Հաշմանդամություն ունեցող երեխաներ*
Ծրագրի սկիզբ և ավարտ	*2022-2026*

Ծրագրի համառոտ նկարագրություն	*Հաշմանդամություն ունեցող անձինք, հատկապես երեխաներն ու նրանց ընտանիքները, այն խոցելի խմբերից են, որ աջակցության կարիք ունեն: ՀՀ կառավարությունը առաջնային է համարում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը, նրանց մասնակցությունը տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական կյանքին:* *Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացրել է ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին:* *Այսպիսով, ընդունվել են ոլորտը կարգավորող հետևյալ փաստաթղթերը.* ➢ *Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա* ➢ *«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքը* ➢ *ՀՀ կառավարության «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագիրը* ➢ *«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը:* *Բոլոր վերոնշյալ փաստաթղթերում կարևորվում է հավասար և մատչելի պայմանների ապահովումը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն իրացնելու և հասարակական կյանքին նրանց մասնակցությունը խթանելու համար, ինչպես նաև համընդհանուր ներառման գաղափարը:* *Առաջարկվող ծրագիրը միաժամանակ կնպաստի նաև ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման 390 կետի իրականացմանը, ըստ որի հաշմանդամության կարգավիճակի սահմանման մեխանիզմները ուղղված կլինեն անձի վերականգնողական ներուժի և աշխատանքային գործունեության խթանմանը, նրա անհատական կարողություններին և կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրմանը՝ ապահովելով նրա լիարժեք մասնակցությունը, գործունեությունը և սոցիալական ներառումը հասարակություն:*

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 4.

« Ընտանիքների աջակցության ծառայություններ»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	*Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը*						
Ծրագրի անմիջական նպատակ	*Հիմնել ընտանիքների աջակցության բազմաֆունկցիոնալ կենտրոն, որը բազմաբնույթ ծառայությունների միջոցով կնպաստի ընտանինքերի հզորացմանը, որպեսզի նրանք կարողանան բացահայտել և զարգացնել իրենց հմտություններն ու ռեսուրսները, ազդեցություն ունենալ սեփական կյանքի վրա՝ բարելավելով կյանքի պայմանները եւ հաղթահարելով ծառացած հիմնախնդիրները*						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	*Ելակետային արժեք*	*Թիրախային արժեքներ*				
		2021	*2022*	*2023*	*2024*	*2025*	*2026*
		-	*100*	*100*	*110*	*110*	*120*
	1. Համայնքում գործում է ընտանիքի աջակցության կենտրոն						

Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Ծառայությունների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	5	5	6	6	7
	2. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ						
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	5	5	7	7	10
	3. Շահառուների ընտանիքներ ստանում են մասնագիտացված ծառայություններ						
	Շահառուների ներգրավվածության աստիճան	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	65%	65%	70%	70%	75%
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Ձեռք բերել համապատասխան տարածք, գույք, տեխնիկական միջոցներ 1.2 Կազմել ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը, տեխնիկական առաջադրանքները, սահմանել ներքին աշխատանքային կանոնակարգեր և աշխատանքի էթիկական նորմեր 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչները, հավաքագրել որակյալ մասնագետներ 2.2 Ստեղծել մասնագետների և կամավորների բազա 3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 3.1 Սահմանել անհրաժեշտ ծառայությունների ցանկը, ստանդարտները և չափորոշիչները 3.2 Կազմել ծառայությունների մատուցման ժամանկացույցը 3.3 Ներգրավել շահառուներին ըստ սահմանված չափորոշիչների և ըստ գնահատված կարիքների ներառել ծառայությունների ծրագրերում 4-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 4.1 Քարտեզագրել շահագրգիռ կառույցները 4.2 Համագործակցել շահագրգիռ կառույցների հետ կազմակերպելով կլոր սեղան քննարկումներ, մշակել շահառու ընտանիքներին աջակցության համատեղ գործողությունների ծրագրեր և ապահովել ծրագրերի իրականացումը						
Ծրագրի բյուջեն	16 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ, տրանսպորտ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ, իրազեկման ցածր մակարդակ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի խոցելի ընտանիքներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2026						

Ծրագրի համառոտ նկարագրություն	*<u>Ներածություն</u>* *«Ազգերի զորությունը ընտանիքի մեջ է, զորավոր է այն ազգը, որն ունի զորավոր ընտանիքներ: Ով կամենում է զորավոր տեսնել յուր ազգը և հաղթող հայրենիքը՝ նա ամենից առաջ ընտանիքները պիտի խնամե:» Մուրացան* *ՀՀ սահմանադրություն Հոդված 16. Ընտանիքի պաշտպանությունը* *Ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:* *ՀՀ -ում ընտանիքների հիմնական մարտահրավերները* - *Աղքատություն* - *Ամուսնալուծությունների թվի աճ, կազմալուծված ընտանիքներ* - *Ընտանեկան փոխհարաբերություններ՝ բռնություն, կոնֆլիկտներ, տարատեսակ կախվածություններ, ծնողավարման հմտությունների ցածր մակարդակ* - *Մեկ ծնողով ղեկավարվող ընտանիքներ (աշխատանքային միգրացիայով պայմանավորված), միայնակ մայրություն, ինչի հետևանքով առաջանում են դժվարություններ երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման, տնտեսական և այլ դժվարություններ, քանի որ մեկ ծնողի վրա է ընկնում լրացուցիչ ծանրաբեռնվածություն, որը պետք է բաշխված լիներ երկու ծնողի միջև:* - *Երեխաների խնամքը ընտանիքում կազմակերպելու անկարողություն, մանկալքություն* *<u>Աղքատությունը ՀՀ-ում</u>* *Համաձայն Համաշխարհային բանկի սահմանման, աղքատությունը որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունն է:* *Ըստ Վիճակագրական կոմիտեի «Աղքատության պատկերը Հայաստանում 2009-2020թթ» զեկույցի 2020թ-ին Հայաստանում աղքատության մակարդակը գնահատվել է 27%, որը 0,6% տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա 26,4%-ից: Ընդ որում Արմավիրի մարզում 36.2%,* *<u>Նյութական և ոչ նյութական աղքատություն</u>* *Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն, իրավունքներ, ներառյալ ձայնի, անվտանգության, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը:* *Աղքատությունը կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինություն է:* *Այսպիսով, աղքատությունը հանգեցնում է հասարակության մեջ ներառվելու դժվարությունների, հաճախ նաև անկարողությանը, հասարակությունից օտարմանը:* *Բացի այդ ըստ ՀՀ-ում ԵՊ ինդեքսի հետազոտության 100 000 բնակչության թվով միջինը 0,66 սոց. աշխատողներ են սպասարկում: Այս թիվը շատ խոսուն է, թե աղքատության և խոցելիության առկա մակարդակի պայմաններում ինչ չափով է իրացվում ընտանիքների սոցիալական ծառայություններ ստանալու իրավունքը:*